Ս ուանց զանգվածային լրատվության միջոցների եւ մասնավորապես մամուլի ազատության, դժվար է պատկերացնել հասարակության եւ անհատների լիակատար ազատություն:

Եւ քանի որ իրոք ազատ հասարակություն աշխարհում այնքան էլ շատ չեն, ներկայումս 120-ից ավելի երկրներում լրագրողները վատ կամ շատ վատ վերաբերմունքի են արժանանում, հալածվում են, բանտարկվում, աքսորվում, լինում են սպանության զոհեր:

Արեւմտյան Եվրոպայում մամուլի ազատությունը խիստ կարեւոր էր համարվում արդեն անցյալ դարի սկզբներին: Երբ 1830 թ. հուլիսին Ֆրանսիայի թագավոր Շառլ 10-րդը ցրեց ընդդիմադիր խորհրդարանը, իսկ վարչապետ իշխան Պոլինյակի հրահանգով վերացվեց մամուլի ազատությունը, երկրում բռնկվեց Հուլիսյան հեղափոխությունը, որի հետեւանքով Շառլ 10-րդը հրաժարվեց գահից, իսկ Պոլինյակը բանտարկվեց մինչեւ 1836 թ.: Երկրում 1881 թ. հուլիսի 29-ին օրենք ընդունվեց մամուլի ազատության մասին: Այնտեղ մասնավորապես նշված էր. «Յուրաքանչյուր թերթ կամ պարբերական կարող է հրապարակվել առանց նախնական թույլտվության եւ երաշխավորման»: Ֆրանսիական բանակի սպա, ծագումով հրեա Ալֆրեդ Դրեյֆուսի (1859-1935) պատմությունը հիանալի լուսաբանությունն է այն բանի, որ ազատ մամուլը եւ մարդու իրավունքները սերտորեն շաղկապված են: 1894 թ. Դրեյֆուսին մեղադրեցին լրտեսության մեջ եւ դատապարտեցին բանտարկության: Սակայն 1897 թ. երկրում դատավարության վերանայման օգտին ծավալվեց համընդհանուր շարժում: Դրեյֆուսի հակառակորդները միավորվել էին Ֆրանսիական հայրենիքի լիգայում, իսկ կողմնակիցները՝ մարդու իրավունքների լիգայում: 1898 թ. հունվարի 13-ին L'Aurore թերթի առաջին էջում […]

[…]

լրատվություն ստանալու նպատակով անօրինական միջոցների չդիմել: Միաժամանակ, «Մամուլի իրավունքների ուղեցույցի» համաձայն, մամուլն ունի հետեւյալ իրավունքները. ֆինանսական եւ խմբագրական անկախություն, մամուլի օրգանների բազմազանություն, լրագրողների անվտանգություն եւ անկախություն, լրատվության աղբյուրների մատչելիություն եւ դրանց պաշտպանություն, «խղճի վերապահման» վկայակոչմամբ պայմանագրի խզման իրավունք, ընթերցողների ազատ ընտրություն:

«Թղթակիցներ առանց սահմանների» կազմակերպությունը վերջերս բնութագրել է մամուլի ազատության վիճակը աշխարհի 162 երկրներում, որոնց միջից ընդամենը 8 […]

նիշներով: Իրադրությունը լուրջ է 23 երկրում. Ադրբեջան, Հայաստան, Վրաստան, Կամբոջա, Կամերուն, Խորվաթիա, Ջիբութի, Հասարակածային Գվինեա, Քենիա, Քուվեյթ, Լեսոտո, Մոլդովա, Օման, Ուզբեկստան, Պերու, Ռուանդա, Հարավսլավիա (Սերբիա եւ Չեռնոգորիա), Սվազիլենդ, Տոգո, Թուրքմենստան, Թուրքիա, Եմեն, Զաիր: Այս խմբում Հայաստանի հայտնվելը հիմնականում պայմանավորված է ազատական մամուլի համար հետամնտություն անցկացնելու դժվարությամբ եւ լաղիստղական միջոցների ոչ-տակական մենաշնորհությամբ: Սակայն նույն խմբում է նաեւ Թուրքիան, որտեղ անցյալ տարի սպանվեց 12 լրագրող եւ 18-ն էլ այժմ բանտարկված են: Ինչպես […]

Աֆրիկյան Հանրապետություն, Ալբանիա, Բելառուս, Բոլիվիա, Բրազիլիա, Բուլղարիա, Կոնգո, Հարավային Կորեա, Էկվադոր, Գաբոն, Գամբիա, Գվինեա, Հոնդուրաս, Հնդկաստան, Ինդոնեզիա, Լաոսիա, Լիտվա, Մադագասկար, Մալայզիա, Մալի, Մավրիտանիա, Նեպալ, Նիգեր, Պանամա, Պապուա-Նոր Գվինեա, Պարագվայ, Լեհաստան, Ռումինիա, Ռուսաստան, Սալվադոր, Սլովակիա, Սլովենիա, Սուրինամ, Թաիլանդ, Ուկրաինա, Վենեսուելա: Այսպիսով, աշխարհի 120 երկրներում մամուլի ազատությունը ոտնահարվում կամ սահմանափակվում է, իսկ լրագրողները այս կամ այն ձեւով հալածվում են: Օրինակ, ներկայումս Չինաստանում բանտարկված է 28 լրագրող, Թուրքիայում 18, Իրանում 9, Սիրիայում 8, Իսրայելում 7, Տաջիկստանում 7, Պերուում 6, Միանմայում 6, Կուբայում, Իրանում, Սուդանում, Թունիսում, Վիետնամում 4-ական, Հնդկաստանում եւ Մալդիվյան կղզիներում 3-ական, Ալբանիայում, Ալժիրում, Անգոլայում, Սաուդյան Արաբիայում, Ավստրալիայում, Գանայում, Հաիթիում, Ինդոնեզիայում, Քուվեյթում, Լիբիայում, Ռուսաստանում, […]

# ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ



[…]

Բոսնիա-Հերցեգովինան, Բուրանը, Չինաստանը, ԿԺԴՀ-ն, Կուբան, Հաիիթին, Իրաքը, Իրանը, Լաոսը, Լիբերիան, Լիբիան, Մալավին, Մալդիվյան կղզիները, Միանման, Սոմալին, Սուդանը, Սիրիան, Տաջիկստանը, Վիետնամը: Այս երկրներում վիճակը վատ է բոլոր չափանիշներով […]

[…] Իրաքը, Ուգանդան, Պակիստանը, Ֆիլիպինները, Սան Թոմեն եւ Պրինսիպին, Սեյշելները, Սիեռա Լեոնեն, Սինգապուրը, Շրի Լանկան, Թայվանը, Տանզանիան, Չադը, Թունիսը, Զիմբաբվեն: Մամուլի ազատության հետ կապված որոշ խնդիրներ կան 36 երկրում. Հարավ- […]

[…] րում (42 երկիր): Կարեւի է հավաստել, որ դրանք հիմնականում այն երկրներն են, որտեղ մամուլի ազատության պայմաններում նրաշխավորված են մարդու հիմնական իրավունքները ու ազատությունները:

Ըստ L'Express-ի թիվ 2186-ի
պատրաստեց ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԸ

## Բուսայական առեւտուր

Հայաստանում, որքան էլ տարօրինակ ինչի ոմանց համար, դեռեւս գոյություն ունի բուսայական առեւտուր հասկացությունը, որտեղ վաճառվի են հանվում հանրապետության շինարարական հանգույցին եւ արդյունաբերական արտադրության անհրաժեշտ հումք, արարանքատեսակներ: Այսպես, սեւ մետալուրգիայի արտադրանքից պողպատ (թիթեղ, անկյունային գլանվածք), գունավորներից ալյումին, տիտան, տարբեր տրամաչափի լատունե խողովակներ եւ այլն:

Առաջարկվող ապրանքների մի չնչին մասն է վաճառվում կանխիկ դրամով, մեծամասամբ՝ վճարումները փոխանցումային են: Սակայն արժեքների աճի հետ պատկերը փոխվում է՝ վաճառքի մեծ մասը կատարվում է կանխիկ վճարով, փոխանցման՝ չնչին տոկոսը:

Դիտարկումներից պարզ է դառնում, որ մեծ պահանջարկ վայելող ապրանքը, եթե չի կորցնում «հետաքրքրությունն» իր հանդեպ, փոխում է վճարման ձեւը, այսինքն վաճառողը նախընտրում է կանխիկը, հեռանալով հանրապետության բանկային համակարգի «բարդ գործողություններից»:

[…]

Վաղը յուղը, ծամոնը եւ ծխախոտ բույր սկիզբ այս դասակարգման մեջ չնկատակել:

ՄԱՐՏ ԲԵԿՅԱՆ

## «Անհարմար» գերծախս

Անգլիական The Economist հանդեսի նյութերից պարզվում է, որ ծխելու խնդրին մեծ ուշադրություն է դարձնում նաեւ... Համաշխարհային բանկը: Ռուսաստանի, Աֆրիկա- […]

[…]

## Աշոտ Հովակիմյան. «Սերբերը եւ հայերը»

Վերջերս Բելգրադում, հակառակ Հարավսլավիայի Միութենական Հանրապետությունում պատերազմական վիճակին, լույս է տեսել բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի […]

[…]

digitised by A.R.A.R.@

